

Այս բոլորը այժմ հանդէս է գալիս և ազգում է երկու ազգութիւնների փոխադարձ յարաբերութիւնների վրա:

Մարտի մէջ կատարված անկարգութիւնների պատճառով փարիզի և Ղուզնի մէջ միաժամանակ պարլամենտական հարցեր առաջարկվեցան իտալական և ֆրանսիական կառավարութիւններին և, թէպէտ սրանք հանգստացնող մեկնութիւններ տրւելին, այնուամենայնիւ Մարտի մէջ պատահած անցքի վատ տպագրութիւնը չէ ցնջվել: Դեռ երկար ժամանակ կանցնի, մինչև այդ երկու ազգութիւնների մէջ կատարելի համաձայնութիւն տիրէ, որ միատեսակ անհրաժեշտ է թէ ֆրանսիայի և թէ իտալիայի համար:

ՖՐԱՆՍԻԱ

Նորերում Գամբետտա նախագահում էր անդր շինողների ժողովին, որի ժամանակ արտասանեց հետևեալ կարճատև ճառը: Վերջին երկու երեք տարիների ընթացքում ֆրանսիայի մէջ ճանապարհորդողի աչքն է ընկնում ոչ այնքան հանրապետութեան թշնամիների անգորութիւնը, որքան հանրապետական կուսակցութիւնների մէջ տիրապետող միաբանութիւնը: Նրա մէջ երեւում է ժողովրդական բնութարանի մի նոր յատկանիշ, որի վրա դարձնում եմ անբուժականների ու շարժութիւնը: Հանրապետական սոցիալիստները հիմնադր են դառնում ժողովրդական այդ համերաշխութիւնը ինձ չափազանց ուրախացնում է: Արքան կամենում են թող խօսեն մեզ վրա և ծաղրեն մեզ, բայց ես հաւատացած եմ, որ ֆրանսիական հանրապետութիւնը երբէք մի ուրիշի չի նմանի և որ ոչ մի տեղ չէ կարելի գտնել այն ուրախութիւնը և լաւ ճաշակը, որոնք ֆրանսիական ժողովրդի յատկանիշներն են: Ես միշտ մեծ ուրախութեամբ եմ մտնում ձեր շրջանը, թողնելով քաղաքական բոլոր հոգսերը և այն ամենը, որոնց իմ նուանդոտ բարեկամները պարլամենտական դժուարութիւն են անուանում: Այդ աստիճանը մեզ լաւ չեն ծանաչում: Ցասերկու տարի առաջ մենք մի դժուար ճանապարհորդութիւն սկսեցինք, յաղթելիցնք միասին մեծ դժուարութիւնների, փոթորիկների ենթարկվեցանք, իսկ այժմ, երբ ամեն բան լաւ արագացւել է խոստանում հանրապետութեանը, աննշան վեճերի պատճառով մեր մէջ անմիաբանութիւն չի ընկնի: Իւրաքանչիւր օր իր հարցն ունի և ի թէ այդ հարցը չէ աջողվում, նրան սխալում են աւելի մեծ և անպարտաւոր շահել: Ինչ ուզում են ասեն իմ մասին, բայց ես հաւատացնում եմ, որ ցանկանում եմ միտնի մի շրջանի պատգամաւոր ընտրվել:

Թէ Գամբետտայի այս ճառը և թէ ֆրանսիական արտասանած ճառը լաւ տպագրութիւն են գործել չափաւոր լրագրիւնների վրա, որոնց կարծիքով հանրապետականները նուրից միացած են: Այսուհետև կարելի է յուսալ որ պատգամաւորների ապագայ ընտրութիւնները համապատասխան կը լինեն այն չափաւոր քաղաքականութեանը, որ պաշտպանում էր մինիստր ժիլ Ֆերրի:

Պատգամաւորների ժողովի նիստի ժամանակ Մարտի մէջ պատահած անկարգութիւնների մասին առաջարկած հարցին ներքին գործերի մինիստր Կոնստան պատասխանեց, որ Մարտի պրեզիդէնտը բոլոր միջոցները գործ է դրել նոր անկարգութիւնների առաջն աւելնու համար: Անկարգութիւնների պատճառը ֆրանսիական բան-

ւորների յարձակումն էր իտալացիների վրա: Մարտից հաղորդում են, որ այնտեղ ապրող բազմութիւն իտալացիները ամբողջով կ'ընդունեն ինքնիւր և ճեճի են ենթարկվել առանց որ և է առիթ տալու սյուպրիսի անկարգութիւններին: Իտալական կուրի նախագահը, վերադառնալով հիւպատոսի մօտ, սաստիկ ձեճվեցաւ: Ամբոխը կամենում էր նրան ձուլը գցել, երբ պոլիցիան նրան ազատեց:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՆ

Վան, յունիս 5/17

Երկար ժամանակ է վեր Ռուսաստանէն լուր չունիմք երբէք, զի հաղորդակցութիւնը արգելուած են խտուր, հետեալս չը գիտեմք թէ ինչ չափ տեղեկութիւններ ունիք վանայ վրայ, որ անոր համեմատ գրեմք, բայց և այնպէս հարկաւոր կը համարեմք զի կ'ընտելաներ: Թէ երկար հատորներով յոգուածներ զրկելու լինիմք զեռ չեն պակտիւր նիթեր:

1) Անշուշտ գիտեք որ կառավարութիւնը ձեռնուած վերջերս արգելեց բոլոր բնակչաց զէնք կրելը: Այդ արգելքն ինչպէս ընդհանուր էր, բայց աւելի խտուր հայաց վրայ կը գործադրուէր: Այլ սակայն շատ չը տեսցի և անհետացաւ գործարգութիւնը:

2) Կառավարութիւնը ամենատարակ խտութեամբ ծանրացրի է հայաց վրայ, բոլորովին կասկածելի կը համարի դանտը: Ամենախտուր մի ընտրած է գատնելու կ'ստիպուած և ուրիշ բոլոր ներքին էր գատնելու համար, որ ինչ բնարանն էր ժամանակն հասած է, ինչ անհեղձ: Բայց տակաւին չը կրցան դատաւարութեան մի կէտ գտնել նորա վրայ, թէպէտ հարցաքննութիւնը կը շարունակուին:

3) Մինչև ցարդ կը կարծուէր թէ թիւրքին իւր բազմատեսակ զեղծմանց մէջ այս մի առաւելութիւն ունի, որ իւրաքանչիւր ազգի ներքին գործոց չը միջամտի, և մասնաւորապէս հայաց սահմանադրութիւն տուած լինելով ազատ թողած է դանտը իրենց ներքին գործոց մէջ, բայց սճաճեաք զարկաւ այդ կողմն ալ և ինչպէս և Պօլիս և այլ տեղեր, նոյնպէս և վանայ մէջ տակաւին արգելք գրած է հայաց զէմ գումարամեծի չանել ոչ զպարզի, ոչ տուներու մէջ, ճառեր չը կարգաւ, սովելոց համար հանգանակութիւն չը ժողովել, և ասոնց նման ամեն տեսակ շարժումներէ հեռի մնալ: Հեղինակներն պատճել սպառնալով և յայտնելով թէ ոստիկանութեան պատուէր եղած է անմիջապէս ձերբակալել այնպիսիները: Այս սովակալի արգելքը մեր ամեն նուիրական գործոց զէմ կը զայ, ոչ կրնամք ունենալ լատարան, ոչ խոտարան և ոչ ալ հրատարակային դատարան: Այս հրամանը հաղորդեցաւ այստեղ մայիս 16 ին, և անմիջապէս գործողիւ հրամայեցաւ: Ահա բարենորոգումները գործութիւնը յանձն առեր է գործողիւ Հայաստան 61-դ յօդուածին համաձայն: Այս օրուան օր կատուած է մեր ձեռքը, մեր լեզուն, պրկուած է մեր միտքը, մեր հոգին: արգելուած է միջ խօսել և լսել, թողարտուած չէ հաղորդել միջ իրարու գաղափարները, և զեռ կատնել թէ թիւրքին ինքնին կրնայ բարեկարգել իւր հպատակաց վիճակը: Կառավարութիւնը անչափ խոտացաւ, մինչև անգամ արգելել ուզեց սահմանադրութեան 21-դ տարեկարծի հանդէսը կատարել, բայց կարգալի մասնաժողովն ոչինչ կարելութիւն չը տուաւ, այլ ներկայացուց հանդէսն Յայնկոյններու պարտէզին մէջ, Այգետտանին կից մի հոյիտի մէջ: 4 հազարէն աւելի երկուստ հանդիսական կար: Տեղի ունեցաւ ճաշկերպութիւն մը որոյ վրայ մասնաւոր զգացմամբ բաժակներ խմուեցան Վ. Ե. Ա. զեքսանդր Գ. Կայսեր կենաց և նորա ներկայացուցիչին ի վան, վեճով պ. Կամարականի համար: Նոյնպէս Անգղիոյ Արքեպիսկոպոս և ազատական նախարարութեան ու նոյնպէս վանայ ներկայացուցիչ վեճով պ. Կլէյմին համար բաժակներ քամուեցան և ուժգին ծափահարութիւնը եղան: Բացի ճաշկերպութեն, որ շատ փառաւոր բան մը եղաւ, տեղի ունեցան նաև ձիարշաւ: Խաղացողներն էին վարձապետանոցի աշակերտներն: Հայկական պար խաղացին երկուստարդներ և հայկական նուագաձուլը կառավարուէին հանդէսը: Նոյնպէս տեղի ունեցան նաև տանախօսու-

թիւնք, թէպէտ կառավարութեան կողմանէ յատկապէս ներկայացուց պատգամաւոր արգելեցին, սակայն չը գործադրուեցաւ արգելքն ու ճառերն անմիջապէս առաւ մի պաշտօնատար վերջէն: հարցաքննութեան ենթարկելու սպառնալքով, բայց զեռ բան մը չեղաւ: Տարեկարծի կողմ մայիս 24 կիրակին: Այդ հանդիպին չբով, ձայներով և նուագաձուլներով թիւրք բոլոր Այգետտան առաւօտէ մինչև երեկոյ. ծափահարութիւն և լիցեցէ-ի աղաղակներն օդը կը գոռայնէին, խոստամամուկ զրօշակներ գեղածփեւալ կը ծածանէին, ու հայկական սրտեր կը վառէին:

4) Մայիս 30-ին վան բերուեցաւ ընդ հսկողութեամբ շարաշուքն Ե՛լյի Ուպետուլլահ. մահմետականք վաղեցին ընդ առաջ լզել Վերմուտան-գորէն այն սուրը ձեռքն, որ հազարաւոր անհաւատացի (?) արին թափեր էր. հայերն անապարեցին ի զէնս նորա տեսնել թէ ինչ հրէշային կենդանիներ եղած են Ատտիլաս, ձինկիլասան, Լէնկթեմուր, որոց ձագն լինել կը թուի դա, և նոյնպէս արհեստագանգ փառաց նախանձորք: Այդ երկու տեսակետով խիստ մեծ բազմութիւն մ'ընդ առաջ ելաւ նմա: Բայց ոստիկաններն որք զայն կը պաշարէին և ձիուն տանձն անգամ թողած չէին նմա ազատ կառավարել, անմիջապէս կիմացունէին որ մի կզեռուար կը բերէին. դաման էր իւր զէմը և կիտակայրենաց համանման: Զգեստներն, մազերն, իւր բոլոր հանդերձուքը կը մասնէին խկոյն թէ ինչ ճիւղ մի կը բնակէր այն մարմնոյն մէջ. սովեմար դիտեցինք զայն: Բայց կառավարութեան ամեն կարգի պաշտօնատարք, թէ քաղաքային, թէ զինուորական, յարգանք օղջունեցին զնա, նոյնպէս և նահանգապետ փաշան, որք ընդ առաջ կեղծ էին Ե՛լյիը ձերբակալող Միշլիը: Նապիֆ փաշային (հրամանատար Գ. բանակին): Տակաւին չը գիտեմք անտալ թէ ինչ պիտի լինի Ե՛լյիին վիճակը, միայն զայս գիտեմք որ Կ. Պօլիս պիտի խրկեն զինքը. արդեօք պարտի կառավարութիւնը բաւական կը համարի այդչափ թեթեւ հատուցում, մինչդեռ իւր դժոխաշունչ արգելք Ե՛լյի Սաղքը և Սպիտի Գատըրը զեռ իրենց հայրենիքը կը մնան ազատ և անպատուաւ: Ֆրանսայի կառավարութիւնը ամի մը մարդոց կոտորածին համար 20—25 հազար զօրք թափեց թուրք և գրեթէ զբաւեց զայն, միթէ սպանուած ֆրանսացիք մարդ էին, և նոյնք մարդ չեն որք անմիջաբար կոտորուեցան Ե՛լյի Ուպետուլլահի ձեռքով և հրամանով, որոց թիւը հազարներով աւելի է քան կոտորուած ֆրանսացոց թիւը: Միթէ ինչ որ ճշմարտութիւն է արգարութիւն է Միշլերկական ժողովն կզբերը, այնպէս չէ Ռուսիոյ ժողովն շարքը, միթէ ինչ որ իրաւունք ունեն ֆրանսացիին իւր քաղաքացոյցն վրէժն առնելու համար, նոյնը չունի պարտին Ե՛լյիին զէմ ի գործ դնել, բայց կը սպասուի տեսնել թէ ինչպէս պիտի վարուի կառավարութիւնը: Լէնկթեմուրի թողան հետը: Այլ սակայն ուշադիր ամեն մէկ անձի մասնաւոր մտադրութեան արժանի է թիւրքից ներկայ խելացի և ցնորական ընթացքը, վասն զի թիւրքիս աննոտացաւ նախորդ հանել ալպանիացիքը: զինել սուաւ, քաջակերպ զանաւոր և միտքիւն մը կազմեց, կարծելով թէ օգտակար պիտի ըլլար իրեն, բայց յետոյ ուսմը և սուր ի ձեռին բանակ խրկեց նոյնպէս և ջարդեց ու ցրուեց, զի ինչպէս ամեն խրոնոլը կրնար գիտնալ, բացի թիւրքից նախարարներէն, ապստամբեցան նոյնք և թիւրքից զլիսոյն ցեղ եղան: Նոյնպէս ազգային յիմարութեամբ զրգուց թիւրքիս անցալ տարի զԵ՛լյի Ուպետուլլահ, ոտք հանեց, քաջակերպ ալպիկական միտքիւնը նման բրդական միտքիւն մը կազմել, գոր ելած էր հոչակն այն ժամանակ թիւրք ժամուրն: Բայց անս հիմակ այ ժամանակեցաւ մեծ ծափերն անել թիւրքիս ու Ե՛լյիը ձերբակալել և ով գիտէ, թէ որչափ զբոտարութիւններ պիտի քաշէ մինչև բաւակաւ նայնէ պարտի կառավարութիւնը: Յիրաւի երբ մարդ մտածէ այս կէտերը, քաղաքական հիւանդութիւն է ի գատ ուրիշ միճակ չը կրնար ենթարկել թիւրքից արդի կացութիւնը: Կառավարութիւն մը որ իւր քաղաքային շահերն այնչափ սխալ կը թողնէ ու փոխանակ իմաստութեամբ կանխատեսելու, վաստոյց կենթարկուի յայտնապէս, այդպիսի կառավարութիւն մը կասեմք, ինչպէս կրնայ ժողովուրդ կառավարել ու հպատակներ գոհացնել: Թող գատեն անտք, որք յայս ունեն թիւրքից վրա:

5) Մայիսի վերջերս գործող լուր մը լսեցինք:

Վանայ ժողովն արևմտեան եզերքին, Հին խաթ (որ այժմ կասուի Ալաթ) զաւառի թեղուտ գիւղը, որ զուտ հայաբնակ է, 200 տուն պարունակող, երկրաշարժէ մը կործանուեցաւ խաղա, սուն մը անգամ անխնայ չը մնաց, 93 անձիք, զիտուորակալ կին, աղջկ և տղայ, փլատակաց ներքե թաղուած մնան, 80-ի չափ վիրաւորեցան, որոց 33-ը ծանր վէրք ունին, և հետեալէս բոլոր զիւրացիք անպատասպար մնացած են: Անգամ թիւրքերն օգուտ քաղելով նոյնք դժբաղդութեան, կը յարձակին յափշտակել նոյնք շարժէն ապատուած իրերն, ապրանքներն և տաւարեղէնք: Առաջ. փոխ. գեր. Արուստանեանց անապարեց հանգանակութիւններ անելով օգնութիւն հեռցնել կարօտելոց: Արդիւրոց մասնաժողովն ալ իւր յատուկ բժշկ և մասնաւոր այցելու մը որոշեց խրկել թեղուտ: Արդէն թէ կառավարութիւնն ալ մի մասնաժողով կազմած է հանգանակութեան համար, բայց զեռ ոչինչ չը հաւարեց նա, զի թոյլ բունած է կառավարութիւնը, քանի որ վաստակներն հայեր են: Եթէ քերթ կամ թիւրք լինէին նոյնք, արդեօք այսպէս ծանր կը շարժէր:

6) Առաջիկայ հունձքերն խիստ առատ են. անձրևներն տեղացին կանանուորակալ ժամանակին, սովն վերջացած է խաղա, բայց արմուխ զեռ հնգապատիկ զին ունին, թէև խիստ առատութեամբ կը գտնուին հրապարակին վրայ:

ՍՄԲԱՍ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳՈՒՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԿ, 23 յունիսի «Голосъ» հաղորդում է: Երէկ Պետերբուրգի հին պալատում ճաշկերպութիւն կար ի պատիւ Կլին բուրգեան արկիցի:

Կ. ՊՈԼԻՍ, 22 յունիսի: Լուրերին համեմատ Արգու-Ալգիլի սպանման գործի պատճառով բոլոր գատապարտվածների մահվան պատիժները փոխարինված կը լինեն մշտական աքաղաքի Տոլմա (?), Արաբիայում 10 Նոյն, 22 յունիսի: Հարձիկը սպանված չէ, այլ փասնգաւոր կերպով վիրաւորված է: Նրա առողջութիւնը մեծ փասնիկ մէջ է: Մեղուորը յայտնվում է մի խելագար մարդ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 21 յունիսի: Հարձիկը վիրաւորված է աջ ձեռքում և մէջքում, զընտակը մտած է ոյնաշարի մօտ: Եթէ ներքէն փաստահանում հանել գնտակը, փոխնալով ներքին արիւնահոսութեան կզեռնագործը Ամերիկա զաղթած մի ֆրանսիացի է: Վիտօ անուեով: Հատապայում են որ նա հոգեկան հիւանդութիւն ունի: Յունիսի 21-ին մինիստրութեան կարգադրութեամբ կանչված է վաչինգտոն փոխնախագահ Արչէր:

ՄԻՆՍԿ, 23 յունիսի: Այստեղ սարսափելի հրդեհ է, 500 տուն արդէն այրվել են, ամբողջ քաղաքը բայցվաւում է:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 22 յունիսի: Հարձիկի առողջութիւնը փոքր ինչ լաւանում է:

ԲՕՒԲԱՅ, 22 յունիսի: Էլյիւր-խան զուրս կ'աւ 13-ին յունիսի շէրաոնց ամեն տեսակ գորքերի հետ:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԿ, 23 յունիսի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 95 ռ. 50 կ., երկրորդ 94 ռ. 50 կ., երրորդ 94 ռ. 37 1/2 կ., չորրորդ 94 ռ. 25 1/2 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսերը 228 ռ., երկրորդ 220 ռ. 75 կ., արևելեան առաջին 92 ռ. 62 1/2 կ., երկրորդ 92 ռ. 75 կ., երրորդ 92 ռ. 50 կ., սակի 7 ռ. 85 կ.: Բուսաց մի բուրք 1 ծնդօնի վրա արժէ 26,6 պէնս, Ամաերգամի վրա 126,87 պէնս, Բուսաց 100 ռ. 1 ծնդօնի վրա արժէ 215 մարկ, Փարիզի վրա 264 Ֆրանկ 75 սանտիմ: Բօրայի արտադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԿՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ